

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԵՐԳԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրհներգի մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-57-Ն
օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «վարչապետի»
բառը փոխարինել «պետական նախարարի» բառերով:

Հոդված 2. Օրենքի վերնագրում, 1-8-րդ հոդվածներում, NN 1 և 2
հավելվածներում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԵՐԳԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրիներգի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքում նախատեսվող փոփոխությունները նպատակ ունեն համապատասխանեցնել օրենքը Արցախի Հանրապետության Սահմանադրությանը և Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերին:
2.	Առաջարկվող կարգավորման բնույթը
	«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրիներգի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է օրենքի 3-րդ հոդվածում, որը սահմանում է Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրիներգի կատարման դեպքերը, «վարչապետի» բառը փոխարինել «պետական նախարարի» բառերով, այդպիսով նախատեսելով պետական նախարարի մասնակցությամբ պաշտոնական և հանդիսավոր արարողությունների ժամանակ օրիներգի կատարման պահանջ: Նախատեսվում է նաև օրենքի ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաքաղի Հանրապետություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով:
3.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:
4.	Ակնկալվող արդյունքը
	Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրիներգի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքը համապատասխանեցնել Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերով սահմանված կառավարության կառուցվածքին վերաբերող կարգավորումներին: